Հավելված N 23
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 6-ի N 598 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՏԱՐԵԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԻ, ԴԱՍԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N _____ ____ _____ 20__ թ.

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

_____ _____
ստուգող մարմնի հասցեն հեռախոսը

Անձնական կոդը	պաշտոնը	ազգանունը, անունը, հայրանունը
Անձնական կոդը	պաշտոնը	ազգանունը, անունը, հայրանունը
Անձնական կոդը	պաշտոնը	ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ _____ 20___ թ., ավարտը՝ _____ _____ 20___ թ.

_____
Ստուգվող սուբյեկտի անվանումը, իրավական տեսակը

_____ ՀՎՀՀ
Պետ. ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

_____ _____
Ստուգվող սուբյեկտի հասցեն Հեռախոսը

_____ _____
Ստուգվող սուբյեկտի ղեկավարի կամ վստահված անձի ազգանունը, անունը, հայրանունը Հեռախոսը

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ կողմից՝ ____ ____ 20__ թ.

Ստուգման նպատակը, ընդգրկված հարցերի համարները՝
_____
_____
_____
_____
_____
_____

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հ.հ.	Հարց	Պատասխան
1.	Ստուգվող սուբյեկտի կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները	
2.	Իրականացվող կրթական ծրագրերը	
3.	Սովորողների թիվը տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	
4.	Սովորողների փաստացի թիվը ստուգման պահին	
5.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը	
6.	Նախորդ ուստարում աշխատանքից ազատված ուսուցիչների թիվը	
7.	Ընթացիկ ուստարում աշխատանքից ազատված ուսուցիչների թիվը	
8.	Նախորդ ուստարում աշխատանքի ընդունված ուսուցիչների թիվը	
9.	Ընթացիկ ուստարում աշխատանքի ընդունված ուսուցիչների թիվը	
10.	Նախորդ ուստարում աշխատանքից ազատված վարպետների թիվը	
11.	Ընթացիկ ուստարում աշխատանքից ազատված վարպետների թիվը	
12.	Նախորդ ուստարում աշխատանքի ընդունված վարպետների թիվը	
13.	Ընթացիկ ուստարում աշխատանքի ընդունված վարպետների թիվը	
14.	Փոխտնօրենների թիվը (նշել պաշտոնները)	
15.	Ուսուցիչների թիվը	
16.	Ատեստավորված ուսուցիչների թիվը	
17.	Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը	
18.	Վարպետների թիվը	
19.	Լաբորանտների թիվը	
20.	Գրադարանավարների թիվը	

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագրեր իրականացնող կազմակերպության կողմից կրթության բովանդակությանը համապատասխան կրթական գործընթացի կազմակերպման, ուսումնական պլանների եւ առարկայական ծրագրերի կատարման, տարեկան ուսումնական ժամանակացույցերի, դասացուցակների պահպանման վերաբերյալ իրականացվող ստուգումների

հ.հ.	Հարց	Հղում նորմատիվ իրավական ակտին	Այո	Ոչ	Չ/Պ	Կշիռ	Ստուգման տեսակը	Մեկնաբանություն
1.	Արհեստագործական մասնագիտական կրթական ծրագրով կրթական գործունեությունը իրականացվում է լիցենզիայի առկայությամբ (ներառյալ ուսուցանվող յուրաքանչյուր մասնագիտության համար): Ուսումնական հաստատությունում պահպանված է լիցենզիայի տրման սահմանված պահանջները:	-ԿՄՕ 41-րդ հոդված, 1-ին մաս -ՊՈԱԿ-ի մասին ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 1-ին մաս -ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, 20-րդ հոդված, 1-ին և 3-րդ մասեր				**2**	փաստաթղթային	
2	Ուսումնական հաստատությունում ուսուցանվող մասնագիտությունների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը մշակվել են ուսումնական հաստատության կողմից, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հաշվի առնելով գործատուների առաջարկությունները և համաձայնեցնելվել են համապատասխան բնագավառի(ների) պետական կառավարման լիազորված մարմնի հետ:	-ԿՄՕ ՀՀ օրենք, հոդված 14, 3-րդ կետ -ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 7, 6-րդ մասեր, հոդված 12, 3-րդ մաս				**2,5**	փաստաթղթային	
3	Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող, ուսումնառող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի քաղաքացիների նկատմամբ կիրառվել է տվյալ ուսումնական հաստատության համանման պայմաններում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ սահմանված ուսման վարձավճարին հավասար չափ:	ԿՄՕ 6-րդ հոդված, 3-րդ մաս				**1**	փաստաթղթային	
4	Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներով և կրթական ծրագրերով նախատեսված և հիմնարկներում ու կազմակերպություններում իրականացվող պրակտիկաները (ուսումնական, արտադրական, ուսումնաարտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային, այլն) իրագործվում	ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, 12-րդ հոդված 4-րդ մաս				**2**	փաստաթղթային և (կամ) ընթացքի նկատմամբ վերահսկողություն	

	են այդ հիմնարկների և կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն:							
5	Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ուսումնառության ժամկետները *(հիմնական կրթական ծրագրի ուսուցման տևողությունը 6 ամսից մինչև 3 տարի է)* սահմանվել են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներով՝ կախված մասնագիտության ուսուցման առանձնահատկությունից և ուսանողի մինչ այդ ստացած կրթությունից կամ կրեդիտների քանակից:	ԿՄՕ 10-րդ հոդված 4-րդ մաս, 14-րդ հոդված, 5-րդ մաս ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, 8-րդ հոդված, 2-րդ և 3-րդ մասեր				**2**	փաստաթղթային	
Հեռավար (դիստանցիոն), դրսեկության (էքստեռնատ) և անհատական մասնագիտական ուսուցման (վարպետային ուսուցում) ձևերով նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությանը կազմակերպվել է կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկերին և կարգերին համապատասխան:		-ԿՄՕ հոդված 14, 7-րդ, 8-րդ կետեր -ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 8, 2-րդ և 3-րդ մասեր -ՀՀ ԿԳ նախարարի՝ 10.02.2012թ. հրաման №109-Ն, հավելված №5 -ՀՀ ԿՈ 30.10.2008թ. №1254-Ն, հավելված 2, 3-րդ կետ				**0**		
6	Հեռավար ուսուցման կազմակերպման հիմքն ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերն են, որոնցով իրականացվող կրթական ծրագրերի բովանդակությունը և տևողությունը *(խորհրդի կամ տնօրենի որոշմամբ հեռավար ուսուցման տևողությունը կարող է կրճատվել այն ուսանողների համար, ովքեր ունեն հարակից միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն)*՝ ըստ մասնագիտությունների համապատասխանում են այդ մասնագիտությունների համար սահմանված պետական կրթական չափորոշիչների պահանջներին (Պետական կրթական չափորոշչի բացակայության դեպքում ուսումնական պլանը համաձայնեցվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ):	-ՀՀ ԿՈ 06.09.2007թ. №1028-Ն, հավելված 1, 5-րդ 7-րդ, 9-րդ,10-րդ կետեր				**1,5**	փաստաթղթային	
7	Ուսումնական հաստատությունում ձևավորվել են առանձին ուսումնական խմբեր, որոնցում ընդգրկված ուսանողների թիվը համապատասխանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանվածին:	ՀՀ ԿՈ 06.09.2007թ. №1028-Ն, հավելված 1, 8-րդ կետ				**1,5**	փաստաթղթային	

8	Հեռավար ուսուցման գործընթացը կազմակերպվել է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում կազմված և ուսումնական հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան:	ՀՀ ԿՈ 06.09.2007թ. №1028-Ն, հավելված 1, 11-րդ կետ				**1**	փաստաթղթային	
9	Դրսեկության ուսուցման կազմակերպման հիմքն ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերն են, որոնցով՝ ըստ մասնագիտությունների իրականացվող կրթական ծրագրերի բովանդակությունը, պարտադիր պարապմունքների ծավալը և տևողությունը համապատասխանում են այդ մասնագիտությունների համար սահմանված պետական կրթական չափորոշիչների պահանջներին (Պետական կրթական չափորոշչի բացակայության դեպքում ուսումնական պլանը համաձայնեցվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ):	ՀՀ ԿՈ 06.09.2007թ. №1028-Ն, հավելված 2, 6-րդ 8-րդ, 13-րդ կետեր				**1,5**	փաստաթղթային	
10	Դրսեկությամբ ուսուցման տևողությունը սահմանվել է ուսումնական հաստատության խորհրդի կամ տնօրենի որոշմամբ՝ հիմք ընդունելով ուսանողների՝ հարակից միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ունենալը, տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով նախատեսված պահանջները յուրացնելու առումով արտակարգ ընդունակություններ դրսևորելը (կարող է կրճատվել), ուսուցումն աշխատանքային գործունեության հետ համատեղումը (կարող է երկարաձգվել մինչև երկու տարով):	ՀՀ ԿՈ 06.09.2007թ. №1028-Ն, հավելված 2, 9-րդ 10-րդ կետեր				**1,5**	փաստաթղթային	
11	Դրսեկությամբ ուսուցման գործընթացը կազմակերպվել է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում կազմված և ուսումնական հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցին (Կրճատված կամ երկարաձգված ժամկետներում կրթական ծրագրի լրիվ յուրացումն իրականացվում է անհատական ժամանակացույցով) համապատասխան:	ՀՀ ԿՈ 06.09.2007թ. №1028-Ն, հավելված 2, 2-րդ, 9-րդ 11-րդ,15-րդ կետեր				**1**	փաստաթղթային	
12	Դրսեկությամբ ուսումնառող ուսանողները հանձնել են ուսումնական պլանով նախատեսված ստուգողական աշխատանքները, ստուգարքները, կուրսային աշխատանքները և քննությունները: Կուրսային և ստուգողական աշխատանքները գրախոսվել են ուսումնական հաստատությունների դասախոսների կողմից:	ՀՀ ԿՈ 06.09.2007թ. №1028-Ն, հավելված 2, 16-րդ կետ				**1,5**	փաստաթղթային և (կամ) ընթացքի նկատմամբ վերահսկողություն	
13	Վարպետային ուսուցման գործընթացն ուսուցանողի և	ՀՀ ԿՈ 30.10.2008թ.				**1**	փաստաթղթային	

	ուսանողի միջև իրականացվել է ուսանողի հետ համաձայնեցված և ուսումնական հաստատության ղեկավարի կամ վարպետի կողմից հաստատված անհատական ուսուցման ժամանակացույցի հիման վրա:	№1254-Ն, հավելված 2, 2-րդ,7-րդ կետեր						
14	Վարպետային ուսուցման կազմակերպման հիմքն ըստ մասնագիտությունների և նրանց որակավորումների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերն են, որոնցով իրականացվող կրթական ծրագրի բովանդակությունը, պարտադիր պարապմունքների ծավալը և դրանց ուսուցման տևողությունը որոշվել է այդ մասնագիտությունների և նրանց որակավորումների համար սահմանված պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան	ՀՀ ԿՈ 30.10.2008թ. №1254-Ն, հավելված 2, 4-րդ, 6-րդ և 7-րդ կետեր				**1,5**	փաստաթղթային	
15	Տվյալ մասնագիտության որակավորման ուսումնական պլանում ընդգրկված յուրաքանչյուր առարկայի գծով ուսանողները հանձնել են նախատեսված ստուգարքները, քննությունները կամ մոդուլները: Առանձին վարպետների մոտ սովորող ուսանողներն ընդհանուր մասնագիտական և ոչ մասնագիտական առարկաներն ուսումնասիրել, ընթացիկ և ամփոփիչ ատեստավորումն անցկացրել են այն ուսումնական հաստատություններում կամ կազմակերպություններում, որոնց հետ պայմանագրային սկզբունքով համագործակցել է վարպետը:	ՀՀ ԿՈ 06.09.2007թ. №1028-Ն, հավելված 2, 11-րդ կետ				**2**	փաստաթղթային	
16	Հաստատության ուսումնական խմբում ուսանողների թիվը սահմանվել է մինչև 25 մարդ:	ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 51-րդ կետ				**2**	փաստաթղթային	
17	Պետական մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար բարձրագույն կրթության մասին վկայող փաստաթուղթը պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթուղթն է, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:	ԿՄՕ 44-րդ հոդված,6-րդ մաս				**3**	փաստաթղթային	
18	Հաստատության կանոնադրության համապատասխանությունը արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությանը և կանոնադրությամբ սահմանված պարտադիր պահանջների	ԿՄՕ հոդված 32, 2-րդ մաս ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 15, 3-րդ կետ ՀՀ կառավարության				**6**	փաստաթղթային	

	կատարումը (Կանոնադրության պահանջները պարտադիր են ուսումնական հաստատության և դրա հիմնադիրների համար)	01.07.2004 թ. № 1210-Ն որոշում, հավելված 2						
19	Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը կնքել է լիազորված մարմնի ղեկավարը:	ՊՈԱԿ-ի մասին ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 2-րդ մաս ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 17, 4-րդ մաս				**1**	փաստաթղթային	

Հարցաշարում «Այո», «Ոչ» և «Չ/պ» պատասխանների նշանակությունը

1.	«Այո»՝ առկա է, համապատասխանում է, բավարարում է	V		
2.	«Ոչ»՝ ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում		V	
3.	«Չ/Պ»՝ չի պահանջվում			V

Ստուգաթերթը պատրաստվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝

1. **ԿՄՕ** - «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք /ՀՕ-297, 1999թ./
2. **ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք** - «Նախնական մասնագիտաան (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք /ՀՕ-164-Ն, 2005թ./
3. **ՊՈԱԿ-ի մասին ՀՀ օրենք -** «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք / ՀՕ-248, 2001թ./
4. **ՀՀ կառավարության 01.07.2004 թ. № 1210-Ն որոշում, հավելված 2** - «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն:
5. **ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման –** «Նախնական մասնագիտական (արհեստագործկան) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին»
6. **ՀՀ ԿՈ 06.09.2007թ. №1028-Ն -** «Նախնական մասնագիտական (արհեստագործկան) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն)/հավելված 2/ և դրսեկությամբ (էքստեռնատով) /հավելված 1/ ուսուցման կարգերը հաստատելու մասին**»**
7. **ՀՀ ԿՈ 30.10.2008թ. №1254-Ն, հավելված 2 -** «Նախնական (արհեստագործական) կրթական ծրագրի անհատական մասնագիտական (վարպետային ուսուցման) ձևերով ուսուցման կարգը հաստատելու մասին**»**

8. **ՀՀ ԿԳ նախարարի՝ 10.02.2012թ. հրաման №109-Ն, հավելված №5** – «Լիցեզավորված անձանց կրթական ծրագրերով տրամադրվող լիցենզիայի ներդիրի ձևերը հաստատելու մասին»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ